ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵՍ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ օրհնութեան գիր է տրուել.

Գուսան նուագախմբին (Արգենտինայի թեմ)
Տիկնանց պատգամաւորական ժողովին (Կանադայի թեմ)
Հոգեւորականաց համագումարին (Կանադայի թեմ)
Կանադայի թեմին՝ 25-ամեակի կապակցութեամբ
Պատգամաւորական ժողովին (Կանադայի թեմ)
Հոգեւորականաց համագումարին (Ֆրանսիայի թեմ)
Պատգամաւորական ժողովին (Ֆրանսիայի թեմ)

ՀՈՂՕՐՀՆԵՔ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Մայսի 2-ին Արմավիրի թեմի Նոր Կեսարիա համայնքում թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի նախագահությամբ եւ մասնակցությամբ թեմի հոգեւորականների կատարվեց նորակառույց եկեղեցու հողի օրհնության կարգ:

Եկեղեցին ամբողջությամբ պետք է կառուցվի եգիպտաբնակ Բարսեղ Գըզըլյանի բարերարությամբ: Աղոթքի տունը պետք է կառուցվի Նոր Կեսարիա համայնքում, քանի որ Բարսեղ Գըզըլյանը պատմական Կեսարիա գյուղից է եւ 2003-ին այցելելով Հայաստան իմացել է, որ Արմավիրի գարածաշրջանում կա գյուղ՝ Նոր Կեսարիա անվամբ:

Առաջնորդարան
Արմավիրի թեմի

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔ ՎԱՂԱՇԵՆՈՒՄ

Սույն թվականի մայիսի 7-ին Գեղարքունյաց թեմի Վաղաշեն համայնքում կատարվեց նոր կառուցվող Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Համայնքը, որ ներկայիս ունի 4200 բնակիչ, ձեւավորվել է 19-րդ դարի 1-ին կեսին Մուշից եւ Ալաշկերտից ներգաղթած մեր հայրենակիցների կողմից:

Թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի հորդորներին ամիսներ առաջ գյուղում եկեղեցի կառուցելու պատրաստակամությամբ արձագանքեց ծնունդով վա-

ղաշենցի եւ ներկայիս ուկրաինաբնակ տիար Հենրիկ Մելքոնյանը: Բարերարի միջոցներով արդեն կառուցվել են եկեղեցու հիմքերը եւ շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչեւ տարեվերջ:

Մարկոս Սրբազանը, ողջունելով ներկաներին, շեշտեց, որ եկեղեցաշինության գործընթացը նոր լիցք պետք է հաղորդի համայնքի հոգեւոր կյանքին եւ մատաղ սերնդի դաստիարակության գործում իր ուրույն դերն է ունենալու: Սրբազան հայրը մասնավոր գնահատանքով անդրադարձավ բարերարի ամուր հավատքին եւ հորդորեց անխոռով մնալ նախնյաց ժառանգության պահպանման նվիրական ծառայության մեջ:

Հիմնարկեքի արարողությանը իրենց մասնակցությունն էին բերել թեմի քահանայից դասը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ եւ պետական այրեր, մարզային ու տարածաշրջանի համայնքների պաշտոնատար անձինք:

ՀՈՒՇԱՐՁԱՆ - ԿՈԹՈՂԻ ԲԱՑՈՒՄ ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ մայիսի 8-ին Նոր Կեսարիայում համայնքապետարանի հարեւանությամբ բացվեց Արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկների եւ անհայտ կորած հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող: Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի գլխավորությամբ ու մասնակցությամբ թեմի հոգեւոր հայրեր Տ. Մաշտոց քհն. Ստեփանյանի եւ Տ. Տաթեւ քհն. Կիրակոսյանի կատարվեց հուշարձանի հանդիսավոր բացման եւ օրհնության արարողություն: Հուշարձանը պատրաստվել է համայնքի միջոցներով եւ ձեռամբ Արմավիրի թեմի Հոկտեմբեր համայնքի բնակիչ, քանդակագործ Սուրեն Լուսիկյանի:

Արարողությանը ներկա էին եւ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին հերոսների հիշատակին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Նոր Կեսարիա համայնքի բնակիչները, միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմը՝ սաների հետ, ինչպես նաեւ համայնքի Արցախյան եւ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ:

ԽԱՆԴՈ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայիսի 8-ին ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ թեմի Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդության հոգեւոր դասի վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Խանդո գյուղի Սուրբ Խաչ եկեղեցին:

Խանդո գյուղը Սամցխե-Ջավախքի Ախալքալաքի շրջանի առավել մարդաշատ գյուղերից է: Բնակիչների նախնիները 1830 թ. տեղափոխվել են Բասենից եւ Կարսից:

Սուրբ Խաչ եկեղեցին հիմնադրվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ գյուղի ծխական Սուրբ Աստվածածին (Ս. Մարկոս) 10-11-րդ դդ. եկեղեցին արդեն փլվում էր: Ուշագրավ է,

որ սկսած 1857-ից Խանդոյում իբրեւ ծխական եկեղեցի հիշվում է միայն Սուրբ Խաչը: Եկեղեցին քարաշեն կառույց է, որի հարավային կողմում փարածվում է գերեզմանատունը:

Մայիսի 8-ին բազմամարդ էր Խանդո գյուղը: Տարբեր վայրերից ժամանել էին գյուղի նախկին բնակիչներ եւ հյուրեր Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից: Միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել նաեւ Սամցխե-Ջավախքի տեղական ինքնակառավարման մարմնի բարձրաստիճան ղեկավարներ:

Հյուրերին գյուղի ազգաբնակչությունը դիմավորեց աղ ու հացով գյուղամուտքում:

Մեծաթիվ հյուրերը եւ գյուղի բնակչությունը հոգեւոր դասի առաջնորդությամբ ուղեւորվեցին Սուրբ Խաչ եկեղեցի: Վերաօծման արարողությունն սկսվեց դռնբացեքի եւ եկեղեցու օրհնության կարգով սաղմոսների ու շարականների երգեցողությամբ ջրով եւ գինով մաքրագործվեցին եկեղեցու 16 սյուները, ապա Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը կատարեց վերաօծման հանդիսավոր կարգը, որին հաջորդեց անդրանիկ պատարագի արարողությունը: Այն մատուցեց Ախալքալաքի շրջանի Արակովա գյուղի Սուրբ Գեւորգ եկեղեցու եւ հարակից գյուղերի հոգեւոր հովիվ Տ. Թադեոս քահանա Տեր-Մկրտչյանը:

Հավարտ պատարագի եկեղեցու բակում տեղի ունեցավ մեծ տոնախմբություն եւ մատաղի օրհնություն: Երգի ու պարի գեղեցիկ կատարումներով հանդես եկավ Սայաթ-Նովա ազգագրական երգի-պարի համույթը՝ Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ:

Սուրբ Խաչ կիսափուլ եկեղեցին հիմնովին եւ գեղեցկորեն նորոգվել եւ փարածքը բարեկարգվել է ծնունդով Խանդո գյուղից Արկադի եւ Համբարձում Թորոսյանների բարերարությամբ: 2003 թ. իրենց ընկերների հետ միասին վերանորոգել են նաեւ 10-11-րդ դդ. հիմնադրված Սուրբ Աստվածածին (Ս. Մարկոս) եկեղեցին:

Սուրբ Խաչ եկեղեցու վերաօծման արարողությունը Խանդո գյուղի համար դարձավ վերջին տասնամյակների մեծագույն իրադարձությունը:

ՀԱՆՈՒՆ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԵՒ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՒ

Մայիսի 11-ին նախագահությամբ Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի եւ տնօրինությամբ Լոռու մարզպետ տիար Արամ Քոչարյանի Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցու սրահում տեղի ունեցավ Վանաձորի, Սպիտակի եւ Գուգարքի տարածաշրջանների հանրակրթական դպրոցների տնօրենների հանդիպում-ժողով: Ժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանը, թեմի ՔԴԿ պատասխանատու Տեր Վահան քահանա Ազարյանը, մարզի կրթության վարչության պետ տիար Մինաս Սայադյանը, հոգեւոր հայրեր: Ժողովը կազմակերպվել էր մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության, հայրենասիրության եւ ազգային կերտվածքով առողջ սերունդ դաստիարակելու հարցերը քննարկելու համար: Ժողովում

արծարծվեցին Հայ Եկեղեցու եւ ժողովրդի պատմություն, հայոց լեզու եւ գրականություն առարկաների դասավանդմանն առնչվող տարաբնույթ խնդիրներ:

Գուգարաց թեմի առանջնորդն աղոթքով բացեց ժողովը եւ իր օրհնության խոսքում անդրադարձավ աշակերտների շրջանում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտին, որը հեռուստատեսության միջոցով ազդում է նրանց դաստիարակության վրա, անդրադարձավ դպրոց-հասարակություն-փողոց հակասությանը: Սրբազան հայրն օրինակներով խոսեց թերագնահատված արժեքների, մեր ինքնությունը խաթարող երեւույթների մասին՝ խիստ կարեւորելով ազգային արժեհամակարգից բխող տոների, հիշատակության օրերի հանդիսավոր կատարումը՝ համադպրոցական միջոցառումների տեսքով: Նա առավելապես շեշտեց ռազմահայրենասիրական, կրոնաբարոյական արժեքներով սերունդներ դաստիարակելու առաջնայնության խնդիրը եւ հորդորեց դպրոցների տնօրեններին աչալուրջ եւ հետեւողական լինել վերոհիշյալ հարցերի նկատմամբ: Օգտվելով պատեհ առիթից՝ առաջնորդ Սրբազան Հայրն առաջարկեց մանկապարտեզների եւ դպրոցների տնօրեններին ձերբազատվել կրթօջախների թվային անվանումներից եւ դրանք հայազգի հայտնի մտավորականների, զորավարների, պետական ու հոգեւոր գործիչների, սրբերի անուններով վերանվանել, հանգամանք, որ նույնպես դաստիարակչական նշանակություն կունենա:

Լոռու մարզպետն իր ելույթում ընդունեց առաջնորդի մտահոգությունները ծառացած խնդիրների շուրջ եւ շեշտեց, որ ինքն անձամբ ամենայն նախանձախնդրությամբ կհետեւի ժողովում բարձրացված հարցերի լուծման գործընթացին: Նա եւս խիստ կարեւորեց եւ ներկաների ուշադրությանը հրավիրեց ազգային ու պետական տոներին եւ հիշատակության օրերին նվիրված միջոցառումներին դպրոցական բարձր դասարանցիների մասնակցության անհրաժեշտությանը: «Մեր երկրի զարգացման ու հզորացման համար նախապայման է ունենալ բարոյահոգեւոր արժեքներ կրող երիտասարդություն եւ հասարակություն».-ավելացրեց մարզպետը:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանը: Հոգեշնորհ Հայր սուրբն իր խոսքում հատկապես շեշտեց եկեղեցի-պետություն-դպրոց համագործակցության ընդլայման կարեւորությունը, որը թույլ կտա միասնական ուժերով կերտել հայեցի, բարեպաշտ ու ազնիվ հայորդիներ: Հայր Վարդանն անդրադարձավ նաեւ այն հարցին, որ կենտրոնը նախատեսում է մոտ ապագայում սկսել «Հայ եկեղեցու պատմություն» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիր:

Ելույթով հանդես եկավ նաեւ Լոռու մարզի կրթության եւ մշակույթի վարչության պետ տիար Մինաս Սայադյանը: Նա նշեց, որ ինչպես «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի, նույնպես եւ դպրոց մուտք գործած ցանկացած այլ նոր առարկայի դասավանդման մշակույթը ձեւավորելու համար հարկավոր է ժամանակ, ուստի վարչությունը հետայսու առավել հետեւողական պետք է լինի դպրոցում սույն առարկայի դասավանդման հետ կապված բացթողումների ու ծագած դժվարությունների նկատմամբ:

Իր ելույթում տեր Վահան քահանա Ազարյանն անդրադարձավ դպրոցից դուրս երեխաների հոգեւոր անվտանգությանն սպառնացող եւ զանազան միջոցներով մարդորսությամբ զբաղվող կրոնական կազմակերպությունների գործունեությանը եւ շեշտեց, որ հար-

կավոր է պարբերաբար նմանատիպ հավաքույթներով վերանայել ու հստակեցնել եկեղեցի-պետություն-դպրոց համագործակցության սկզբունքները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ 6-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ

Մայիսի 11-14-ն Իսպանիայի Մալագա քաղաքում տեղի ունեցավ Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի 6-րդ լիագումար հանդիպումը:

Հանդիպման թեման էր՝ Կրոնների ասփվածաբանությունը, Փոքրամասնական եւ մեծամասնական Եկեղեցիների փոխհարաբերությունները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

Տ. ՆՈՐՎԱՆ ԱՐՔԵՊՍ. ՋԱՔԱՐՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԱՐԵՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանն ազատվել է Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատվիրակի պարտականություններից եւ կոչվել հանգստի:

Նորին Սրբության նույն տնօրինությամբ Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական նոր պատվիրակ է նշանակվել Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Ջաքարյանը:

«ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԴԻԱԿՈՆԻԿ ԱՇԽԱՏԱՆՔԸ. ՆՎԱՃՈՒՄՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ, ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մայիսի 18-20-ը Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում կայացավ «Եկեղեցիների դիակոնիկ աշխատանքը. նվաճումներ, խնդիրներ, մտահոգություններ» խորագրով համաժողով՝ կազմակերպված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) կողմից: Ավելի քան քսան երկրների ներկայացուցիչները քննարկեցին դիակոնիկ աշխատանքի ներկան եւ ապագայի հեռանկարները, ԵՀԽ դերը դիակոնիկ ծառայության հետագա զարգացման եւ բարելավման գործում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր հայաս-

տանյան Կլոր սեղան բարեգործական հիմնադրամի տնօրեն պրն. Կարեն Նազարյանը, որը հանդես եկավ «Սոցիալական դիակոնիան Հայ Առաքելական Եկեղեցում» զեկույցով:

Համաժողովի մասնակիցներին ընդունեց Ռումին Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Դանիել Ա Պատրիարքը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Շիրակի մարզպետարանի կրթության վարչության հետ համագործակցաբար Գյումրի քաղաքի 40 դպրոցներում իրականացրեց օլիմպիադա «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայից:

Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի օրհնությամբ կազմակերպված օլիմպիադայի առաջին փուլին մասնակցեցին 6-րդ եւ 7-րդ դասարանների սաները, որոնցից լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները մայիսի 14-ին մասնակցեցին համաքաղաքային փուլին:

Երեխաների գիտելիքներն ու ստեղծագործական ունակությունները վերհանելուն միտված աշխատանքների արդյունքում հաղթող ճանաչվեցին 6-րդ եւ 7-րդ դասարանների երեքական աշակերտներ: Նրանք մայիսի 20-ին Գյումրի քաղաքի տարբեր դպրոցներից ներգրավված աշակերտների ուժերով կազմակերպված գրական-երաժշտական ցերեկույթի շրջանակներում պարգեւատրվեցին՝ արժանանալով համապատասխանաբար 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգի մրցանակների:

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Ս.թ. մայիսի 27-ին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատանը տեղի ունեցավ Խրիմյան կրթօջախի 2008-2009 ուս. տարվա փակումը եւ գիտաժողով: Հրավիրված էին Մայր Աթոռի ՔԴԿ-ի տնօրեն՝ Տ. Վարդան աբղ. Նավասարդյանը, ՊԳԹ դոցենտ Ավետիս Հարությունյանը, ՀՀ գրողների միությունը ներկայացնող Գարեգին Գեւորգյանը եւ մանկավարժական գիտությունների թեկնածու Գոշ Սարգսյանը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը, այնուհետեւ՝ Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը, որից հետո խոսքը հանձնվեց բանախոսներին:

Ավետիս Հարությունյանը խոսեց խաչքարերի եւ խաչքարաշինության մասին, Գարեգին Գեւորգյանի թեման էր՝ «Գրականությունը եւ նրա դերը մեր կյանքում», Գոշ Սարգսյանը երեխաներին ներկայացրեց զեկուցում «Թատրոնը եւ նրա ընկալման կերպերը» թեմայով:

Գիտաժողովի ավարտին տեղի ունեցավ ավարտական վկայականների հանձնում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՅԱՐՈՍԼԱՎԼԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏԻՆ

Մայիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Յարոսլավլի նահանգապետ Սերգեյ Վախռուկովին՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՆԵՂՈՒՑԻ ՎԱՆՔ

Մայիս 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Երեւանի Ավան եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների հանրակրթական դպրոցներում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար ուխտագնացություն էր կազմակերպել Կոտայքի թեմի Նեղուցի վանք (Ժ-ԺԳ դդ.):

Ուխտագնացությանը միացել էին նաեւ Ավան - Առինջ համայնքի հավատացյալները՝ հոգեւոր հովիվ Տ. Սմբատ քահանա Սարգսյանի առաջնորդությամբ, ինչպես նաեւ Երեւանի տարբեր համայնքներից շուրջ 150 հավատավոր հայորդիներ:

Ս. Նեղուցի կիսախոնարհ վանքում Մայր Աթոռի մի քանի միաբանների հետ Ս. Պատարագ մատուցեց ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: Հայր Սուրբն իր ոգեշունչ քարոզում պատգամեց առավել նախանձախնդրությամբ մատաղ սերնդին հաղորդ դարձնել մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային ժառանգությանը, Հայ Եկեղեցու սրբազան ավանդություններին ու պատմությանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՔ ԼԻՈՆՈՒՄ

Մայիսի 29-ից հունիսի 2-ը Լիոնում Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի միավորված երիտասարդական կազմակերպությունների նախաձեռնությամբ տեղի ունեցավ ԵԵԿ 13-րդ համաժողովին մասնակից երիտասարդական պատվիրակությունների նախապատրաստական հավաք՝ «Քրիստոսի կողմից մեկ հույսի կոչված» թեմայով:

Հավաքի նպատակն էր ներկայացնել Եւրոպայի միավորված երիտասարդական կազմակերպությունները, բացատրել Լիոնի 13-րդ համաժողովի դերն ու նշանակությունը, խրախուսել մասնակիցներին՝ Եւրոպայի էկումենիկ շարժման ապագա գործունեությունն ակտիվացնելու նպատակով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հավաքին մասնակցեց Տ. Շահե աբեղա Անանյանը:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մայիսի 29-ից հունիսի 2-ը Մեծ Բրիտանիայի բանակի քրիստոնեական կազմակերպությունների նախաձեռնությամբ եւ Զինված ուժերի քահանաների առաջնորդի աջակցությամբ Լոնդոնում տեղի ունեցավ Քրիստոնյա զինվորական եղբայրությունների միության եվրոպական համաժողով՝ «Պատրաստում ենք հաջորդ սերնդին» թեմայով:

Համաժողովի նպատակն էր զինված ուժերում քրիստոնեական քարոզչության բարելավումն ու հոգեւոր սպասավորների նոր սերունդների նախապատրաստությունը՝ ժամանակակից կյանքի մարտահրավերները հաղթահարելու համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում են ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը եւ Տ. Պարույր քահանա Ավետիսյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՏՐՆԱՎԱՅԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մայիսի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սլովակիայի Հանրապետության Տրնավայի մարզի նախագահ Տիբոր Միկուշին՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ 140 ԱՄՅԱԿԸ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Քանի որ 2009 թ. համարվում է կոմիտասյան տարի, այդ իսկ պատճառով Արմավիրի թեմի առաջնորդարանում նույնպես կազմակերպվել էր մեծ վարդապետի 140 ամյակին նվիրված ցերեկույթ: Առաջնորդարանի հարկի տակ էին հավաքվել թեմի հոգեւոր դասը, քաղաքի մշակութային կենտրոնների ղեկավարներ եւ աշխատակիցներ, երիտասարդներ եւ դպրոցահասակներ՝ ունկնդրելու Կոմիտասի հիասքանչ ստեղծագործությունները:

Միջոցառումն առաջնորդարանում կազմակերպելու նախաձեռնությունն Արմավիրի թեմի ՔԴԿ պատասխանատու Ռուզան Հարությունյանինն էր, իսկ ցերեկույթի հեղինակ-ղեկավարն էր Երեւանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի վոկալ ամբիոնի դասախոս, Արմավիր քաղաքի արվեստի պետական քոլեջի դասատու Նունե Մուրադյանը: Վերջինս նաեւ երկու տասնամյակից ավելի Արմավիրի թեմի Բամբակաշատի Ս. Աստվածածին առաջորդանիստ եկեղեցու մեներգչուհին է:

Միջոցառումը վարում էր քոլեջի տեսաբան Նունե Սամսոնյանը, իսկ նվագակցում էին քոլեջի դասատուներ Հ. Հակոբյանը եւ Վ. Համբարյանը:

Կոմիտասյան ցերեկույթի ավարտին մասնակիցները Սրբազան հորից ստացան հուշնվերներ: